ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՇԱՐ ԱԼ-ԱՍԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ (2000-2004 ԹԹ.)

2000թ. հուլիսի 12-ին հումընդհանուր հանրաքվեի ժամանակ ստանալով քվեարկության մասնակիցների ձայների 97,29 %-ը, Սիրիայի Արաբական Հանրապետության /ՍԱՀ/ նախագահ ընտրվեց Բաշար ալ-Ասադը[1]:

Սիրիան, որի ներքաղաքական կյանքը 1971 թ.-ից անփոփոխ ընթանում էր գրեթե նույն տրամաբանությամբ և առանց որևէ զգալի ցնցումների /բացառությամբ 1979-82 թթ. «Մահմեդական եղբայրներ» կազմակերպության հակակառավարական գործողությունների/ կամ նորամուծությունների, հայտնվեց կտրուկ փոփոխությունների մի շրջանում:

Բաշար ալ-Ասադի իշխանության գալն ինքնին մեծ սպասելիքներ առաջացրեց: Ակնկալվում էր, որ արևմտյան կրթություն ստացած երիտասարդ նախագահը կձեռնարկի սիրիական հասարակությունը վերափոխելու մի շարք քայլեր[2]: Այս հույսերի առհավատչյան դարձավ Բաշար ալ-Ասադի նախագահի պաշտոնում առաջին ելույթը, որում նա Սիրիայի դերի, Իսրայելի, Լիբանանի և արաբական աշխարհի հետ հարաբերությունների հետ մեկտեղ առանձնահատուկ շեշտեց ներքաղաքական և վարչական արմատական բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև մատնանշեց ներքին քաղաքական զարգացման երկու հիմնական ուղղությունները՝ տնտեսական ազատականացումը և պետության արդիականացումը: Կոչ անելով իրականացնել ներքին բարեփոխումներ՝ նոր նախագահն ընդգծեց գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների բարելավման, բաց և կառուցողական քննադատության անհրաժեշտությունը[3]:

Այս սպասումները ինչ-որ չափով արդարացան, սակայն ոչ ամբողջովին: Նրանք ովքեր ակնկալում էին կտրուկ փոփոխություններ, նույնիսկ հիասթափություն ապրեցին: Իրականում պարզ էր, որ սկզբնական շրջանում, մինչև իր դիրքերի ամրապնդելը, Բաշար ալ-Ասադը իտսա-

փելու էր այլագ հաջողության հասնելու մտքից: Բարեփոխումների քայլ առ քայլ իրականացումը հնարավորինս թույլ կտար խուսափել հակառակորդների հակաքայլերից[4]: Պատահական չէ, որ նախաձեռնվող փոփոխությունները կրում էին երկարաժամկետ բնույթ և իրականացվում էին մեծ զգուշավորությամբ: Հետաքրքիր է, որ շատերը նրա այս քայլերը նմանեցնում են իր հոր իշխանության գալու առաջին շրջանի քաղաքականության հետ:

Աստիճանական փոփոխություններն ինչ-որ չափով համահունչ էին հասարակական տրամադրություններին: Մի կողմից հասարակությունը բարենորոգումների պահանջ ուներ, սակայն մյուս կողմից՝ գիտակցում էր կայունության պահպանման կարևորությունը. ինչը թույլ կտար խուսափել մի իրավիճակից, որ ստեղծվել էր ՍԱՀ անկախության ձեռք բերումից հետո, երբ հեղափոխությունները ու հեղաշրջումները սովորական երևույթ էին դարձել երկրի քաղաքական կյանքում:

Նախագահ ընտրվելուց հետո Բաշար ալ-Ասադի առաջին որոշմամբ արգելվեց իր և հոր պատկերներով պաստառներ փակցնելը[5]: Սա յուրատեսակ «մշակութային հեղափոխություն» էր սիրիական հասարակության համար, եթե հաշվի առնենք այն փաստը, որ նախկինում այդ պատկերները սիրիական քաղաքների և բնակավայրերի անբաժանելի և սովորական մասն էին կազմում[6]: Սրանով, թվում էր թե ակնարկվում էր ավտորիտարից դեպի ժողովրդավարական համակարգ անցում կատարելու նրա վճռականությունը:

Բաշար ալ-Ասադը շարունակեց նաև դեռևս իր հոր կողմից սկսած համաներման քաղաքականությունը: Տարբեր տվյալներով՝ 2000 թ. սեպտեմբերին Սիրիայի բանտերում կային մոտ 1300 քաղբանտարկյալներ[7]: Նույն թվականի նոյեմբերին Բաշար ալ-Ասադի հայտարարած համաներման շնորհիվ բանտերից ազատ արձակվեցին 600 քաղբանտարկյալներ, հիմնականում իսլամականներ և կոմունիստներ, ինչը հասարակության և միջազգային կազմակերպությունների կողմից դիտվեց իբրև առաջին քայլ քաղաքացիական հասարակության ձևավորման և երկրի ժողովրդականացման ուղղությամբ:

Կարևոր բարեփոխումներ նախաձեռնվցին հենց իշխանական համակարգի ներսում, Բաասս կուսակցության և Ազգային Առաջադիմական Ճակատի[8] /ԱԱՃ/ շրջանակներում:

Զգալիորեն երիտասարդացվեց Բաասի ղեկավարությունը: 2000 թ. մայիսին Բաասի Տարածաշրջանային համագումարի պատգամավորների նախնական ընտրությունների արդյունքում, համագումարի աշխատանքներին մասնակցելու հնարավորություն ստացան 200 նոր երիտասարդ բաասականներ, որոնց մեծամասնությունը Բաշար ալ-Ասադի կողմնակիցներն էին[9]: Հունիսի 17-19-ի համագումարում Բաասի կենտկոմի կազմը նորացվեց 70 %-ով (90 անդամից 62-ը առաջին անգամ էին

ընդգրկվում նրա կազմում). ավելի քան կեսով նորացվեց Տարածաշրջանային ղեկավարության կազմը (21-ից 12-ը նոր անդամներ էին)[10]:

Ղեկավարության շրջանում կատարած փոփոխությունները նպատակ ունեին նաև աշխուժացնել Բաաս կուսակցության ամենօրյա գործունեությունը. վախելով աշխատանքի մեթոդները. որոնց կիրառման արդյունքում վերջին տարիներին խիստ թուլացել էր կուսակցության կապը հասարակության հետ:

Այսպես. 2000 թ. կայացած Բաաս Տարածաշրջանային ղեկավարության նիստում որոշվեց հրաժարվել կուսակցությունում պաշտոնների նշանակումների համակարգից և 2001 թ. հունվարի 20-ին անցկացնել կուսակցական ընտրություններ: Նիստի ժամանակ Բաշար ալ-Ասադը նույնիսկ ակնարկեց. որ կցանկանար հաջորդ 2007 թ. ընտրություններն անցկացնել այլընտրանքային սկզբունքներով:

Սի շարք փոփոխություններ կատարվեցին նաև Ազգային Առաջադիմական ճակատում /ԱԱՃ/:

Ստեղծման առաջին տարիներից. ԱԱՃ-ի հիմնադիր փաստաթղթում՝ Ազգային խարտիայում հատուկ նշվում էր Ճակատում Բաասի առանձնահատուկ դերը: Այն միակն էր ԱԱՃ անդամ կուսակցություններից. որն իրավունք ուներ սեփական թերթը հրատարակել եւ հասարակական ինստիտուտներում քաղաքական աշխատանք իրականացնել: Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո այս մենաշնորհը. որոշակիորեն մեղմացվեց: ԱԱՃ անդամ 6 կուսակցություններից երեքին թույլատրվեց հրատարակել սեփական թերթեր եւ 2001 թ. հունվարին լույս տեսավ ՍԿԿ-ի կողմից հրատարակվող «Նիդալ աշ-Շաաբ» թերթը[11]: 2002 թ. փետրվարից ԱԱՃ-ի Կանոնադրության 9 հոդվածի փոփոխության արդյունքում[12] ԱԱՃ-ի անդամ բոլոր կուսակցություններն իրավունք ստացան գործել երիտասարդության շրջանում և համալսարաններում[13]: Այս ամենը վկայում էր սիրիական քաղաքական կյանքում հենց քաղաքական միավորների դերն ու նշանակությունը մեծացնելու Բաշար ալ-Ասադը ձգտման մասին ի հակակշիռ ոչ քաղաքական միավորների՝ բանակի և հատուկ ծառայությունների. որոնք Հաֆեզ ալ-Ասադի կառավարման հատկապես վերջին տարիներին ավելի մեծ կարևորություն էին ձեռք բերել սիրիական հասարակության մեջ՝ հետին պլան մղելով ԱԱՃ- կուսակցություններին /խոսքը հիմնականում Բաասի մասին է/: Այս մասին է վկայում նաև կառավարության ձևավորման կուսակցական սկզբունքի պահպանումը. երբ ԱԱՃ-ի անդամ ցանկացած կուսակցություն անկախ նրա դերից և հնարավորություններից ստանում է նախարարական պաշտոններ[14]:

Հասարակության ժողովրդավարացմանն էր միտված նաև նախկինում արգելված քաղաքական ուժերի վերադարձը քաղաքական թատե-

բաբեմ. ինչպես նաև նոր կազմակերպությունների և նույնիսկ կուսակցությունների ստեղծումը:

Այսպես, Սիրիական ազգային սոցիալական կուսակցությունը /ՍԱՍԿ/. որը արգելվել էր 1955 թ.. սկսեց ազատ գործունեություն ծավալել երկրում[15]. իսկ 2003 թ. մարտի ընտրությունների արդյունքում այս կուսակցության ներկայացուցչությունը խորհրդարանում հասավ 3-ի /երկուսը ԱԱՃ-ի ցուցակներով. մեկը «անկախների»/[16]: Այս ամենը լուրջ հիմքեր է տալիս ենթադրելու. որ կուսակցությունը կարող է ապագայում համայրել ԱԱՃ-ի շարքերը.[17] ստանալով երկրի քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորություն. առավել ևս. որ նրա առաջնորդները չեն ժխտում նման հնարավորություն:

Այսպիսով, Բաշար ալ-Ասադը փորձեց շարունակել իր հոր քաղաքականությունը. երբ երկրում գոյություն ունեցող քիչ թե շատ ազդեցիկ բոլոր քաղաքական ուժերը. վարչակարգի նկատմամբ լոյալություն դրսևորելու պայմաններում ներառվում էին քաղաքական պաշտոնական համակարգի՝ ԱԱՃ-ի մեջ: Սրանով Բաշար ալ-Ասադը ձգտում էր հնարավորինս ընդլայնել սեփական քաղաքական հենարանը և փորձում կառուցել «վերահսկելի ժողովրդավարության» համակարգ:

2002 թ. հունիսի երկրորդ կեսին «մարդասիրական նկատառումներով» Բաշար ալ-Ասադի հրամանով ազատ արձակվեց կոմունիստական կուսակցություններից[18] մեկի առաջնորդ Ռիադ Թուրքին[19]. որը բանտարկվել էր հակակառավարական ելույթների համար դեռևս 1980 թ.: Եվ նույնիսկ նա խստագույն քննադատության ենթարկելով իշխանություններին. կոչ անելով լուծարել ԱԱՃ-ը. ընդունել նոր օրենք կուսակցությունների մասին և չեղյալ հայտարարել Սահմանադրության 8-րդ հոդվածը. որով «Բաաս»-ը հռչակվում էր «պետության. հասարակության ղեկավար ուժ». միաժամանակ հայտարարեց. որ «լավատեսություն է ներշնչում այն. որ երկրում այսօր բաց են դեպի հաշտություն. երկխոսություն և բարեփոխումների գործընթաց տանող դռները»[20]:

2000 թ. մոտ 280 մտավորականներ հիմնեցին նոր կուսակցություն՝ Շարժում հանուն սոցիալական խաղաղության: Ազատությունների մթնոլորտն այնքան էր ազդել հասարակության վրա. որ նոր կուսակցության հիմնադիրները նույնիսկ պահանջեցին վերացնել երկրում գործող արտակարգ իրավիճակը և լուծարել Բաաս կուսակցությունը[21]:

Քաղաքական դաշտում իրականացված փոփոխությունները վստահություն ներշնչեց նաև հասարակական տարբեր շրջանակների մոտ:

Բաշար սդ-Ասադը փորձում էր հրավիրել հասարակական բաց երկխոսություն. թեև շատ զգույշ և պետության խստագույն հսկողության ներքո[-2]: Հարցազրույց տալով եգիպտական «ալ-Ռխբուա» շաբաթաթերթին՝ նա հայտարարեց. «Ես հավատում եմ ժողովրդավարությանը և հարգում ուրիշների կարծիքը: Ես չեմ պատրաստվում ղեկավարել

միանձնյա կերպով: Ես պատրաստ եմ լսել տարբեր կարծիքներ և տարբեր տեսանկյուններ. անկախ այն հանգամանքից համաձայն եմ դրանց հետ թե՝ ոչ»[23]:

Հասարակությունն արձագանքեց այս հրավերին և կառավարման առաջին 4 ամիսների ընթացքում նախագահ Բաշար ալ-Ասադին ուղղվեցին 4 բաց նամակներ, որոնք տպագրվեցին նաև լիբանանյան մամուլում և մեծ արձագանք ստացան սիրիական հասարակությունում: Նրանք պահանջում էին բարեփոխումներ իրականացնել՝ մատնանշելով երկրում առկա թերությունները: Վարչակարգը բավականին բարյացակամ ընդունեց այդ նամակները: Իշխանությունների կոշտ արձագանքի բացակայության պայմաններում 2000 թ. սեպտեմբերին լիբանանյան մամուլում տպագրվեց «99-ի ուղերձը», որը կոչ էր անում վերականգնել խոսքի ազատությունը, վերացնել ռազմական դրությունը, որ հաստատված էր երկրում դեռ 1963 թ.-ից, ներմուծել քաղաքական բազմակարծությունը և քաղբանտարկյալներին համընդհանուր համաներում հայտարարել: «Բաց նամակը» ստորագրողների թվում էին սիրիացի հայտնի մտավորականներ՝ բանաստեղծ Ադոնիսը, փիլիսոփա Սադեկ Ջալալ ալ-Ազմը, վիպասան Հայդաը Հայդարը, պատմաբան Աբդուլլահ Հանանան, ռեժիսոր Մոհամմեդ Մալլասը և դերասան Խալեդ Թայան և այլք[24]:

2001 թ. հունվարին հայտնվեց «1000-ի ուղերձը»: Այս ուղերձի հեղինակները նույնպես ազատական հայացքներով բարեփոխումների կողմնակից մտավորականներ էին: Ուղերձում նրանք կոչ էին անում Բաշար ալ-Ասադին ապահովել դատարանների ազատությունը, իրականացնել ԱԱՄ-ի արմատական վերափոխումը, ազատ արձակել քաղբանտարկյալներին, վերացնել արտակարգ դրությունը, ապահովել խոսքի ազատությունը[25]:

Այս երկու ուղերձներում էլ, փաստորեն, սիրիական տարբեր մտավորական շրջանակներ կոչ էին անում Բաշար ալ-Ասադին՝ շարունակել բարեփոխումները և իրենց աջակցությունն էին հայտնում նախագահին:

Օրինակ, Սիրիայում քաղաքացիական հասարակության վերականգնման կոմիտեի[26] անդամ Միշել Կիլոն Լոնդոնում լույս տեսնող «ալ-Շարկ ալ-Աուսատ»-ին տված հարցազրույցում նշում է, որ նրանք ուղարկել են այս նամակը նախագահին, և չէին ակնկալում, որ այն կհրապարակվի մամուլում: Սակայն դա տեղի ունեցավ, ինչը վկայությունն է այն բանի, որ երկրում վերականգնվում է ժողովրդավարությունը: Իսկ նամակը հեղինակած մտավորականները չեն հավակնում իշխանության և չեն ներկայացնում թշնամական պահանջներ: «Մենք ուզում ենք օգնել իշխանություններին, հասնելու լավագույն արդյունքի»: Ընդ որում նշվում է, որ արված առաջարկությունները չեն վնասելու ներքին վիճակին, և մտավորականներն աշխատել են հենց ժողովրդի միասնության,

հայրենիքի պաշտպանության և զրաված տարածքների վերադարձման սկզբունքների շրջանակում[27]: Ուշագրավ է նաև 2002 թ. հունվարի 5-ին սիրիական մամուլում հրապարակված Ազգային դեմոկրատական ժողով կազմակերպության անդամ 10 ակտիվիստ ձախ այլախոհների հայտարարությունը, որով վերջիններս համաձայնվում էին մասնակցել բաց քաղաքական բանավեճերի, որոնք նախաձեռնվել էին Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո: Խմբի գործադիր քարտուղար Հասան Աբդ ալ-Ազիմի խոսքերով՝ 10 տարուց հետո ընդհատակից դուրս գալու որոշումը կապված է Բաշարի ալ-Ասադի իշխանության գալուց հետո տեղի գտած որոշակի ազատական փոփոխությունների հետ[28]:

Այս ամենը վկայում էր երկրում հայտարարված «կառուցողական քննադատության» թույլտվության իրական լինելու մասին: «Դամասկոսյան գարնան» հետևանքներից էր նաև խոսքի ազատության որոշակի վերականգնումը և մի շարք կազմակերպությունների և ինստիտուտների ստեղծումը, որոնց գործունեությունը նախկին նախագահի օրոք ուղղակի անհնար էր:

Դամասկոսում սկսեց գործել «մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեն»՝ սիրիացի լրագրող Անդամ Նախասայի գլխավորությամբ: 2000 թ. երկրորդ կեսին ՍԱՀ-ում սկսեցին ի հայտ գալ «քաղաքական ակումբներ»[29], որտեղ բավականին բաց քննարկումներ էին ընթանում Սիրիայի ապագա զարգացման ուղիների շուրջ, նպատակ ունենալով երկրում քաղաքացիական հասարակության զարգացման խրախուսումը:

Խոսքի ազատության ոլորտում որոշակի տեղաշարժերն արտահայտվեցին ԶԼՄ-ներում կատարված փոփոխություններով: Թեև չընդունվեցին օրենքներ, որոնք կապահովեին խոսքի, մամուլի ազատությունը, քաղաքական բազմակարծությունը և հանրահավաքների ազատությունը, սակայն այստեղ որոշակիորեն իրականացվեց գրաքննությունից ԶԼՄ-ների ձեռքազատումը:

Գրեթե բոլոր պետական թերթերը սկսեցին հրապարակել բավականին «սուր» հոդվածներ՝ կառավարության տնտեսական քաղաքականության քննադատությամբ: Բաշար ալ-Ասադն անձամբ հանդիպեց ԶԼՄ-ների խմբագրերի հետ և քաջալերեց նրանց այդ պահվածքը[30]: Վերացվեց Բաասի մենաշնորհը թերթեր հրատարակելու ոլորտում, ինչի հետևանքով 2001 թ. հունվարին բացվեց վերջին 40 տարում առաջին մասնավոր թերթը[31]:

Լուրջ ցուցանիշ էր նաև պետական «Թիշրին» և «Աս-Սաուրա» թերթերի, հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նոր ղեկավարների և գլխավոր խմբագրերի նշանակումը և մի շարք այլ փոփոխություններ: Այսպես, «Թիշրին» խմբագրություն վերադարձավ Արեֆ Դալիլան, որն ստրատաքսվել էր երկրից: Նա վերադարձավ Բաշարի ալ-Ասադի խնդրանքով և առաջին իսկ հոդվածում նշեց, որ միակուսակցա-

կան համակարգը Սիրիայի տնտեսական անհաջողությունների պատճառ է. և բարեփոխումները հաջողություն չեն ունենա առանց իշխանական համակարգից շատ դեմքերի հեռացնելու[32]: Միաժամանակ բերբի նոր գլխավոր խմբագիրը հայտարարեց «Մենք համերաշխ ենք դոկտոր Բաշարի կողմից վարվող քաղաքականության հետ. որն ուղղված է Սիրիայում ժողովրդավարության խորացման ու երկրի արդիականացմանը»[33]:

Այդուհանդերձ նույնիսկ այս սահմանափակ բարեփոխումները միանշանակ չընդունվեցին հասարակության տարբեր հատվածների կողմից: Իշխանական վերնախավում շարունակում էր բավականին ազդեցիկ դիրքեր պահպանել «հին գվարդիան»՝ Բաշար ալ-Ասադի հոր գործընկերները և կողմնակիցները. որոնք չէին թաքցնում բավականին անբարյացակամ վերաբերմունքը բարեփոխումների նկատմամբ: Նրանց նախաձեռնությամբ արդեն 2001 թ. փետրվարին Բաաս Տարածաշրջանային ղեկավարության 17 անդամներն ուղարկվեցին տարբեր համալսարաններ՝ «երկրում իրավիճակի բացատրության» նպատակով զեկույցներ կարդալու համար: Ընդ որում, այս գործընթացն անձամբ ղեկավարվում էր ՍԱՀ փոխնախագահ Աբդ ալ-Հալիմ Խադդամը. որը հետագայում քաղաքական արդիականացման կողմնակիցներին մեղադրեց «պետության անվտանգության և կայունության կարմիր գիծը» անցնելու մեջ[34]: Երկիրը վերափոխելու կոչով հանդես եկած մտավորականները մեղադրվեցին արտասահմանյան կապերի և երկիրը թուլացնելու և քայքայելու մեջ: Այսպես. պաշտպանության նախկին նախարար Մուստաֆա Տլասը 2001 թ. ապրիլի 12-ին. ելույթ ունենալով «Աբու-Դաբի» արբանյակային հեռուստաալիքով. հանդես եկավ «1000-ի ուղերձի» հեղինակներին «ԿՀՎ-ի և Սիրիայի թշնամիների հետ» կապեր ունենալու մեղադրանքով[35]:

Պահպանողականներին հաջողվեց որոշակիորեն կանգնեցնել հասարակական բարեփոխումների ընթացքը: Քաղաքացիական ակտիվիստներից մի քանիսը նույնիսկ ձերբակալվեցին: 2001 թ. օգոստոսին ձերբակալվեցին սիրիական խորհրդարանի անդամ Հոմսին. հայտնի գործարար և պատգամավոր Մեյհիլը. Դալիլին և շուրջ մեկ տասնյակ այլ գործիչներ: Փակվեցին 14 «քաղաքացիական ընկերություններ» և քաղաքական ակումբներ: Իսկ մյուսների գործունեությունը խիստ սահմանափակվեց[36]:

Ձերբակալվեցին նաև 2004 թ. մարտի 8-ին Դամասկոսում Բաաս կուսակցության իշխանության գալու 41-ամյակին նվիրված տոնակատարությունների ժամանակ «Ազատություն խոցի բանտարկյալներին» պաստառներով փոքրաքանակ իրավապաշտպանական ակցիայի կազմակերպիչներն ու մասնակիցները: Ախալմամբ ձերբակալվեց եւ մեկ ժամ անց ազատ արձակվեց նաեւ այս գործողությունների ականատես

ԱՄՆ դեսպանատան աշխատակիցը:[37] Դեպքը խստագույնս դատապարտեց Սիրիայում ԱՄՆ դեսպանության. հետո նաեւ ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից. որի պաշտոնական ներկայացուցիչ Ռիչարդ Բաուչերը. նշեց դիվանագիտական ներկայացուցիչների ճաճեռնմխելիության խախտման անթույլատրելության մասին[38]:

Ընդ որում պետք է նշել. որ բարեփոխումների դեմ ուղղված այս գործողությունները գարմանալի միակարծությամբ պաշտպանվեցին Բասաս կուսակցության անդամների կողմից: Պարզվեց. որ սիրիական քաղաքական վերնախավն ընդհանրապես պատրաստ չգտնվեց ժողովրդավարական բարեփոխումների անցկացմանը: Եվ որքան էլ մեծ լիներ նախագահ Բաշար ալ-Ասադի վերափոխումներ կատարելու ցանկությունը. հնարավոր չէր դրանք իրականացնել առանց իշխանական վերնախավի համաձայնության:

Այսպիսով, առաջին 4 տարիները լուրջ փորձությունների շրջան էին երիտասարդ նախագահ Բաշար ալ-Ասադի համար: Կառավարման այս փուլում նա զգալի փոփոխություններ իրականացրեց Սիրիայի ներքին կյանքում: Թեև դրանցից շատերը վերջնական լուծում չստացան. սակայն դրանց իրականացման փաստն ինքնին շատ խոսուն է: Սիրիայի նմանն ավտորիտար երկրում տեղի ունեցան ժողովրդավարական որոշակի տեղաշարժեր. որոնք հետագայում կանգ առան:

Պատճառները տարբեր են՝ և՛ ներքին քաղաքական և՛ արտաքին:

Ներքաղաքական ասպարեզում Բաշար ալ-Ասադը ուղղակի չէր կարող հաշվի չառնել քաղաքացիական բարեփոխումների անցկացման դեմ ցուցադրված դիմադրությունը. քանի որ, ինչպես նշում էին հոռետեսները. նրա իշխանության երկու հենարանները շարունակում էին մնալ հենց Բասաս կուսակցությունը և բանակը.[39] որոնք այդքան էլ չէին ցանկանում փոխել ստեղծված իրավիճակը: Միաժամանակ իշխանության այս առաջին տարիներին նա փորձեր կատարեց ընդարձակել սեփական սոցիալ-քաղաքական բազան: Սրան էին միտված և՛ ԱԱՃ-ի ընդարձակմանն ուղղված քայլերը. և՛ նոր կազմակերպությունների գործունեության արտոնումը և՛ հասարակական քննարկման խրախուսումը:

Բացի այդ նույնիսկ զգուշավոր բարեփոխումներն իրականացնելիս նոր նախագահը պետք է հաշվի առներ այն. որ ներքաղաքական կարևոր հիմնախնդիրներից էր նաև երկրի կայունության պահպանումը: Հաֆեզ ալ-Ասադից հետո իշխանության անցումը նրա որդուն կարող էր լուրջ հակասությունների առիթ դառնալ սուննի-ալավի[40] համայնքների փոխհարաբերություններում: Լինելով երկրում կրոնական փոքրամասնություն կազմող ալավիական համայնքի ներկայացուցիչ՝ նա մշտապես զգում էր այս վտանգը: Թեև նրա իշխանության առաջին շրջանում ի հայտ չեկան առաջնորդներ. որոնք սուննիական կնախաճեռնեին ելույթ ալավիական գերիշխանության դեմ[41] և երկրի մեծամասնությունը կազ-

մող սուննիները պատրաստակամություն հայտնեցին ընդունել Բաշար ալ-Ասադի կառավարումը, սակայն դա չի նշանակում, որ երկրի ճնշող մեծամասնությունը կազմող սուննիները պատրաստ են «հավերժ» համաձայնել ալավիական ղեկավարության փաստի հետ[42]: Եվ եթե Հաֆեզ ալ-Ասադի ստեղծած հակակշիռների և ընտանեկան վերնախավի հետ դաշինքի համակարգը բավականին արդյունավետ էր եւ բացառում էր լուրջ ցնցումների հնարավորությունը, այդուհանդերձ, դա չի նշանակում, որ կարելի էր անտեսել այս վտանգը:

Բարեփոխումներին խոչընդոտող հանգամանք էր նաև միջազգային լարված իրավիճակը: Տարածաշրջանի բարդ իրադրությունը ստիպում էին Բաշար ալ-Ասադին ավելի մեծ ուշադրություն դարձնել երկրի արտաքին հարաբերություններին: ԱՄՆ-ի ներխուժումն Իրաք մեծ խնդիրներ հարուցեց նաև Դամասկոսի համար, կապված Սիրիայի նկատմամբ ԱՄՆ-ի շարունակական ճնշման հետ:

Այս ամենը հիմք է տալիս, այնուամենայնիվ, ակնկալելու, որ ՍԱՀ նախագահը կշարունակի երկրի ժողովրդավարացմանն ուղղված բարեփոխումները, որոնք, սակայն, կունենան սեփական առանձնահատկություններ: Հատկանշանական է, նախագահի երդման արարողության առաջին ելույթում Բաշար ալ-Ասադի կողմից արտահայտած ժողովրդավարության իր ընկալումը: «Ինչ աստիճանի ենք մենք ժողովրդավա՞ր: Որո՞նք են ժողովրդավարության բնորոշումները: Ընտրություննե՞րը, ազատ մամո՞ւլը, խոսքի ազատությո՞ւնը, թե՞ այլ իրավունքներն ու պարտականությունները... Մենք չենք կարող կիրառել ուրիշների ժողովրդավարությունը մեզանում: Արևմտյան ժողովրդավարությունը, օրինակ, բազմադարյա պատմության արդյունք է, որն արտահայտված է սովորույթներով և ավանդույթներով, որ բնութագրում է արևմտյան հասարակությունների ժամանակակից մշակույթը... Որպեսզի մենք էլ կիրառենք այն, մենք պետք է վերապրենք նրանց կյանքը... Պարզ է, որ դա անհնար է, մեր ժողովրդի փորձը պետք է լինի յուրօրինակ, ինքնատիպ, պետք է բխի մեր պատմությունից, մշակույթից և քաղաքակրթությունից իբրև պատասխան մեր հասարակության կարիքների և մեր իրականության պահանջների»[43]:

SUREN MANUKYAN

ON SOME SOCIAL AND DOMESTIC CHANGES IN SYRIA UNDER PRESIDENT BASHAR AL-ASSAD IN HIS FIRST FOUR YEARS. (2000-2004)

The new president of Syria Bashar al-Asad who had succeeded his father as head of state in 2000 implemented some social and political reforms in Syria.

The new president expanded free speech policy, countenanced a relatively open debate on Syria's domestic needs. Many intellectuals sent him "open letters" ("99`s

letter", "1000's appeal") asking for political, economic, and social reform. Claiming that Syria was in terrible condition, the letter-writers, very politely, demanded change. Papers published these letters and they were circulated inside Syria.

Surprisingly, they were tolerated by the regime, signaling that the era of regulation of thought and speech was over.

But along with the presidency, Bashar inherited a set of pressing and severe problems.

Realizing reforms he had to maintain a balance between his own identity and the various forces defining the country. Bashar has chosen to concentrate first on broadening his own social and political base and consolidating his position.

So, he handled some reforms in political system of Syria. He allowed activities of some underground and banned parties and made attempts to democratize and enlarge of broaden shape of ruling alliance of parties - National Progressive Front. Supposedly, he tried to create "Controlled demoeraey" in Syria.

The Old guard achieved to stop some of reforms by closing the number of "discussion clubs" and arresting some demoeratie activists. Being concentrated in foreign affairs Bashar al-Asad couldn't prevent this process.

Setting aside the need for quick successes allows him to advance slowly and deal with rear-guard pressure from the still-powerful older generation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2000 թ. հունիսի 10-ին վախճանվեց Հաֆեզ ալ-Ասադը, որը ՍԱՀ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 1971 –ից. և երկրում իշխանության ղեկը մոտ 40 տարի իր ձեռքում պահող «Բաաս» կուսակցությունը նախագահի պաշտոնին առաջադրեց նրա որդուն՝ Բաշար ալ-Ասադին: Ընդ որում դրա համար խորհրդարանը փոփոխության ենթարկեց երկրի Սահմանադրության 83 հոդվածը՝ նվազեցնելով նախագահական պաշտոնի համար անհրաժեշտ տարիքը 40-ից 34 – ի. ինչը թույլ տվեց 34-ամյա Բաշարին նշանակել նախագահի պաշտոնակատար:

2 Ակնկալիքները հասնում էին այնպիսի չափերի, որ խոսվում էր նույնիսկ 1964 թ. ազգայնացված հողերը հին տերերին վերադարձնելու, աշխատավարձը 100 տոկոսով բարձրացնելու և նույնիսկ «Բաաս» կուսակցությանն իշխանության մենաշնորհից զրկելու մասին:

3 Բաշար ալ-Ասադի նախագահի երդման ելույթը ըստ http://www.basharassad.org

4 Baidatz Yossi, Bashar's First Year: From Ophthalmology to a National Vision // Policy Focus Research Reports on Palestinian Issues, #41, (July 2001), www.washingtoninstitute.org/pubs/pfs/pfs

5 Համաձայն այս որոշման նկարները կարող էին լինել միայն կառավարական շենքերում: Թեև հետագայում դրանք հայտնվեցին նաև փողոցում, սակայն նմանօրինակ հրամանի ի հայտ գալն ինքնին շատ խոսուն էր:

6 Moubayed Sami Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p31.

7 Համաձայն «Միջազգային համաներում» կազմակերպության տվյալների՝ նրանց թիվը 1989 թ. հասնում էր 10 հազարի:

8 Ազգային Առաջադիմական Ճակատը հիմնվել է 1972 թ.: Ներկայումս նրա կազմի մեջ են մտնում «Բասաս»-ը, Սիրիական կոմկուսը, Արաբական սոցիալիստական միությունը, Արաբական սոցիալիստների շարժումը, Սոցիալ-յունիոնիստների կուսակցությունը, Յունիոնիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը /1988 թ-ից/, ինչպես նաև 1980 թ-ից Բանվորների արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, Գյուղացիների համընդհանուր ֆեդերացիան և Բաասական հեղափոխական երիտասարդության միությունը:

9 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.349// Ближний Восток и современность, вып.18, М., 2003

10 «Հին գվարդիայի» ներկայացուցիչները, որոշ բացառությամբ, մնացին Տարածաշրջանային ղեկավարության կազմում:

11 2001 թ. սեպտեմբերի 22-ի համար 50 հրամանագրի տեքստը տես www.sana.org/arabic/decree/publications%20and%20press,

12 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003

13 Բանակում քաղաքական գործունեություն ծավալելու թույլտվությունը, այնուամենայնիվ, պահպանեց միայն Բաասը:

14 Կոմունիստները, օրինակ, ստացան 3 տեղ 2001 թ. դեկտեմբերին կազմված «բազմակուսակցական» կառավարության մեջ /Երկու նախարար ներկայացնում էին Յուսեֆ Ֆեյսալի ՍԿԿ-ն և մեկ նախարար Վ.Բակդաշի ՍԿԿ-ն կուսակցությունը/:

15 Ոչ պաշտոնապես ՍԱՍԿ վերսկսել էր իր գործունեությունը դեռ 1990-ական թվականներին, երբ նրա ներկայացուցիչներից մեկը մշտապես ընտրվում է Ազգային խորհրդի անդամ՝ «անկախ» պատգամավորների շարքում:

16 www.elaph.com, 5 March 2003 ըստ Косач Г. «Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии»// Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.312

17 www.asharqalawasat.com/view/news/2003?03?12?157385 ըստ Косач Г. «Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии»// Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.277

18 Սիրիայում այսօր գործում են 3 կոմկուս /Յուսեֆ Ֆեյսալի, Վիսալ Ֆահրա Բաղդաշի ղեկավարությամբ երկու ՍԿԿ-ները և ոչ լեգալ պայմաններում գործող ՍԿԿ-Քաղբյուրոն Ռ.Թուրքի ղեկավարությամբ/:

19• Ռիյադ Թուրքի խմբակցությունը հեռացավ ՍԿԿ-ից 1972 թ. և հիմնեց Սիրիայի կոմունիստական կուսակցություն՝ Քաղբյուրո կուսակցությունը, որը 1979 թ. դարձավ ընդդիմադիր Ազգային-ժողովրդական միավորման անդամ:

20 alhiwaradimocratv.free.fr/alrai15 ըստ Косач Г.Г.«Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии» // Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.280

21 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p. 88.

22 Косач И.Г., «Сирия при новом президенте: тенденции политического развития», с.38 // Востоковедный сборник (вып.3), М., 2002.

23 Lancaster Pat, Syria looks forward// Middle East, Jul/Aug2000 Issue 301, p4.
24 Moubayed Sami, Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
25 Ахмедов В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика» М., 2003, с. 92
26 Այն իր մեջ է միավորել տարբեր կողմնորոշումներ ունեցող մարդկանց՝ մարքսիստներ. լիբերալներ. իսլամականներ. ազգայնական և չեզոք մտավորականներից
27 «On the civil socity and reform discussions in Syria»// Arabic News.com, 1/17/2001
28 Сирия: диссиденты выходят из подполья //MIGnews 5.01.2002 www.mignews.com
29 «Ալ-Հայաթ». 19, 14.01.2001.
30 Ахмедов В. «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 92
31 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p.88.
32 Moubayed Sami Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
33 The Middle East, N 306, November 2000, c. 39.
34 Agence France Press (AFP), 15.02.2001.
35 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003
36 Ахмедов В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 95
37 Пеников В. Ф., «О ситуации в Сирии» // http://www.iimes.ru/rus/stat/2004/27-05-04.htm
38 « Коммерсант », 10.03.04
39 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p88
40 Ալավիականությունն իսլամական շիական կրոնական հոսանքներից մեկն է: 1963 թ.-ից սկսում է նկատվել ալավիական ծագում ունեցող գործիչների դերի բարձրացումը ՍԱՀ իշխանական վերնախավում, որը նախագահ Հաֆեզ ալ-Ասադի օրոք դարձավ որոշիչ:
41 Pryce-Jones David, The Middle East: Death of a Tyrant - Assad and the world he left //National Review, July 3, 2000
42 Эксперты о Хафезе Асаде, его сыне и судьбе Сирии// "Вести " http://vesti.ru/ daynews/2000/06/13/40assad/experts
43 Բաշար ալ-Ասադի նախագահի երդման ելույթը ըստ http://www.basharassad.org